ՖԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԱԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ
(արտահերթ)

ք. Երևան **29.06.2020թ.**

Հոգաբարձուների խորհրդի արտահերթ նիստն անցկացվեց «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (Ինստիտուտ) գիտական խորհրդի նիստերի դահլիճում (ք. Երևան, Ալեք Մանուկյան 11): Նիստին ներկա էին հոգաբարձուների խորհրդի (Խորհուրդ) 24 անդամներից 20–ը, որից 7 հոգին առցանց zoom հարթակի միջոցով: Գրանցման թերթիկը կցվում է:

Խորհրդի նիստը հեռարձակվում էր ուղիղ եթերով Ինստիտուտի ֆեյսբուքյան էջով:

Ապահովված էր նիստի քվորումը:

Նիստը վարում էր՝

Խորհրդի նախագահ Ռոման Մուրադյանը:

Նիստն արձանագրեց՝

Խորհրդի քարտուղար Անահիտ Ստեփանյանը:

Օրակարգ

1. 29.06.2020թ. Հոգաբարձուների խորհրդի թիվ 2 նիստի օրակարգի հաստատում:
2. Ինստիտուտի կառուցվածքի փոփոխության հաստատում:
3. Ինստիտուտի հաստիքացուցակի հաստատում:
4. Ինստիտուտի նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատում:

Օրակարգի առաջին հարցով (զեկուցող՝ Խորհրդի նախագահ Ռոման Մուրադյան)

Խորհրդի նախագահ Ռ. Մուրադյանն առաջարկեց հաստատել նիստի օրակարգը:

Խորհրդի անդամներ Ա. Հակոբյանը, Ե. Հակոբյանը և Ինստիտուտի ռեկտորի ժ/պ Դ. Խիթարյանը առաջարկեցին օրակարգի 4–րդ հարցը հանել հաստատումից և ուղարկել նոր խմբագրություն: Մասնավորապես Ա. Հակոբյանը նշեց, որ անհրաժեշտ է Հոգաբարձուների խորհրդի 29.06.2020թ. թիվ 2-Լ որոշման նախագծում կատարել փոփոխություններ՝ նշելով, որ

Հոգաբարձուների խորհուրդը հաստատում է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, բացառությամբ նպատակների և շահառուների: Ռեկտորի պաշտոնակատար Դ. Խիթարյանը առաջարկեց նոր խմբագրությամբ ինստիտուտի նոր անվանումը փոփոխել և թողնել գործող անվանումը, Ե. Հակոբյանն էլ առաջարկեց խմբագրական աշխատանքներ տանել նպատակների և խնդիրների մասում. մասնավորապես հստակեցնել առողջարարական տեխնոլոգիաներ հասկացությունը:

Առաջարկություններն ընդունվեցին:

Օրակարգի առաջին հարցը դրվեց քվեարկության՝ առանց 4–րդ հարցի: Առաջին հարցին կողմ քվեարկեց 20, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0: Օրակարգն ընդունվեց:

Օրակարգի երկրորդ հարցով (զեկուցող՝ Ինստիտուտի ռեկտորի ժ/պ Դավիթ Խիթարյան)

Դ. Խիթարյանը ներկայացրեց Ինստիտուտի կառուցվածքում կատարված փոփոխությունները, որոնք վերաբերում էին կոչումներ շնորհելու և հրատարակչա–խմբագրական խորհուրդի նոր անվանմանը՝ գիտահամակարգող խորհուրդ, ուսումնագիտական վարչությանը՝ ուսումնագիտական բաժին, բուժկետի անվանմանը և ենթակայությանը, ըստ փոփոխության՝ ամբուլատորիա և ռեկտորին ենթակա ստորաբաժանում, սպորտի մանկավարժության և հոգեբանության անբիոնի ենթակայությանը, փոփոխությամբ՝ առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետի ենթակայություն, «Սպորտ կաբ» գիտահետազոտական կենտրոնի ենթակայությանը՝ փոփոխությամբ ռեկտորի ենթակայություն, բժշկակենսաբանական լաբորատորիայի միացումը բժշկակենսաբանական գիտությունների ամբիոնին:

Օրակարգի երկրորդ հարցը դրվեց քվեարկության: Երկրորդ հարցին կողմ քվեարկեց 20, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0: Կառուցվածքն ընդունվեց:

Օրակարգի երրորդ հարցով (զեկուցող՝ Ինստիտուտի ռեկտորի ժ/պ Դավիթ Խիթարյան)

Դ. Խիթարյանը ներկայացրեց Ինստիտուտի վարչական, ուսումնաօժանդական և պրոֆեսորադասախոսական աշխատակազմի հաստիքացուցակը:

Օրակարգի երրորդ հարցը դրվեց քվեարկության: Երրորդ հարցին կողմ քվեարկեց 20, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0: Հաստիքացուցակն ընդունվեց:

Խորհրդի նախագահ ***Ռոման Մուրադյան***

Խորհրդի քարտուղար ***Անահիտ Ստեփանյան***